

նպատակների համար. մենք յիշատակել ենք արգէն այս երկի սկզբնագրի մասին Գլաձորի գրչութեան արգիւնքները թուարկելիս: Լուծմունքը շատ համառօտ է, բառերի և որոշ մտքերի լուսաբանութեան հետ կապուած, իւր իսկ խօսքերով «ի տեղիս տեղիս գծարարւոյժ բանիցն գրեցի լուծմունս» (*):

Նշեցու աշխատութիւնների մի տեսակն է նորա քարոզները, ոչ բառի սովորական իմաստով, այլ մեկնաբանական-փիլիսոփայական ոճով գրութիւններ այս կամ այն խնդրի լուսաբանութեան համար. գոցանից մէկն է, «Մեծ հետորին հայոց Եսայեայի ի բանն որ ասէ. «Զոր եդ Աճ յկղցոյ. այս են. նախ զառաքելս և որ ի կարգի». սկս. «Զաժախնսն ճառել զբան և զգծս. յԱճ վստահանալ պարտ է» (**): Իւր ճառի նիւթը համառօտ որոշելուց յետոյ՝ հին յոյների նման զիմում է Աստծուն. «տուր ինձ բան ի քոն իմաստութենէդ, րպ. (որպէս) զի իմանալ կարացից պտշճպ. և ասել գիտուբ. զասացուածս»: Տեսական-փիլիսոփայական մասերի համար նա բառացի օգտուում է Արիստոտէլի և Արիստաքացու հայ թարգմանութիւններից, մասամբ Դաւթի Սահմանաց գրքից և նրանց համեմատ բացատրում խնդիրները: Նախ սահմանում է Աստուծոյ գործը իւր ստորաբաժանումներով՝ արարչական, նախախնամական, օրէնսդրական և դիտողական, անփոփոխ և անկարօտ նիւթի. դորա հակառակ մարդկային և հրեշտակային կամքն ու ներգործութիւնը փոփոխական, բայց ոչ ճակատագրական, այլ անձնիշխան, ուստի և գովելի կամ պարսաւելի: Տիեզերքը եռաշրջան կամ եռայարկ է՝ վերինը երկինք, միջինը բնութիւն և ստորինը երկիր (***) . մարդու մեղանշականութեան հանգէպ «բանն Այ. » «մրմին զգենու», որպէս զի «նոր երկինք» և «նոր մարդ» ստեղծէ, որ եկեղեցին է. բոտ Դիոնեսիոս Արիստաքացու «երկինք ի յերկր է տճր. սբ. »: Երկնքի, Աստուծոյ աթոռի և հրեշտակների նմանութեամբ բացատրում է եկեղեցու ճարտարապետական շէնքի բաժանումներն ու պաշտօնէութեան աստիճանաւորութիւնները. երկրաւոր եկեղեցին կարգաւորուած է երկնային եկեղեցու հետեւողութեամբ. կարեւոր մի տեսութիւն մեր եկեղեցական ճարտարապետութեան մասերն ու ամբողջացումը հասկանալու համար:

Նշեցու «փիլիսոփայական» մեթոտի մասին գաղափար կազմելու համար տեսնենք, ի՞նչպէս է բացատրում «Զոր եդ Աճ յեկեղեցոյ» նախադասութեան մէջ դնել բառը. «Եւ պրտ. է գիտել, զի գնելդ եւ ուակի ասի, կմ. իբր ի տեղոյ րպ. (որպէս) ի մղ. ումն, կմ. ներաստումն, կմ. իբր անուանակոչել, քզի. դրուի. ասի եւ անուակոչութի. , կմ. սնմել. , զոր հնագոյնքն գնել սովորեցան ասել. րպ. մեծն Արիստոտէլէս ասէ ի սկիզբն որ յղգս. մեկնեւ. գրոցն, րպ. ասէ. Նախ գնել արժան է, րպ. թէ սնմել. , զի՛նչ անուն, զի՛նչ բայ, եւ ապա զի՛նչ բացասուի. եւ ստորասութի. եւ բան» (*): Այսպիսի տեսութեան հիման վերայ պարզում է, որ Աստուծոյ է դրել եկեղեցու հիմքը առաքելների կողմով եւ ահմամնել ամենայն կատարելութեամբ, ինչպէս «սահման»ն ինքը կատարել է, որ «ոչ յաւելուած ը. ունի եւ ոչ պկսուի. » . իսկ «ի տեղոյ կամ ի մղոյ. » եկեղեցին ընտրուած տեղն է և մարդկանց ժողովը: Պաշտօնէութեան աստիճանաւորութեան մէջ առաջին երեք դասերն են առաքելները, մարգարէները և վարդապետները, թէպէտ շնորհները շատ են: Առաքելների պատիւը բարձր է, որովհետեւ նրանք ընտրուած են, իսկ մարգարէի (նոր կտակարանի մտքով) և վարդապետի տարբերութիւնն այն է, որ մէկը «գամ. ի հզոյն. բրբռէր. » , իսկ միւսը մարդկային աշխատութեամբ առաքելական և մարգարէական գրքերը մեկնում է և մատչելի կերակուր դարձնում «լուսաւոր հանճարով»: Հետաքրքրական է նորա բացատրութիւնը վարդապետի կոչման մասին, որ տիրապետող էր ամբողջ միջին դարում. «վրդքն. ի լրումն ամենեցուն գոլով զոքլցն. եւ զմգէիցն. ոչ պակաս պատուական է», այլ և առաւել. «րպ. կառավար ի կուս. , եւ ի նաւի, որ զգնին ունիցի: եւ զձկնին. քղքինն. եւ ի տեսնն. անձնակն. , րպ. գրէ Պղատոն. Անեկրաւափն մի ներքսամտեցէ» (**): Յորենի, գարու եւայլն բոյսերը անասունների կերակուր են, քանի չեն մաքրուած, աղացուած եւ հաց պատրաստուած, այդպէս եւ առաքելական եւ մարգարէական գրքերը «չեւ եւս ի ձեռն վրպոյ. քննեալ եւ մեկնեալ, անասնաբարոյ մրդկն. է կերակուր, որ ոչ զմիտս գրոց իմանան եւ ոչ զառակաւոր իմաստ նց. » , բայց «ի ձեռն վրպոյ. քննեալ եւ ճմլեալ զիմաստս բնից. , յառաջ բերեն զհանճարս եւ զիմաստուի. » : Վարդապետը պէտք է իւր քարոզածը և գործով ցոյց տայ, «զի այսպի. վրպքս. ըս. բնեւ. անուան իմաստասէր եւ փիլիսոփոս կոչին», Պղատոնի խօսքերով. «վրպ. կուչեմ ոչ զայն, որ բզմ. բանս ի բերան առնու, այլ որ մաքուր վարս ստացեալ ունի» (***) : Յունաց իմաստ

տոտէլէս ասէ ի սկիզբն որ յղգս. մեկնեւ. գրոցն, րպ. ասէ. Նախ գնել արժան է, րպ. թէ սնմել. , զի՛նչ անուն, զի՛նչ բայ, եւ ապա զի՛նչ բացասուի. եւ ստորասութի. եւ բան» (*): Այսպիսի տեսութեան հիման վերայ պարզում է, որ Աստուծոյ է դրել եկեղեցու հիմքը առաքելների կողմով եւ ահմամնել ամենայն կատարելութեամբ, ինչպէս «սահման»ն ինքը կատարել է, որ «ոչ յաւելուած ը. ունի եւ ոչ պկսուի. » . իսկ «ի տեղոյ կամ ի մղոյ. » եկեղեցին ընտրուած տեղն է և մարդկանց ժողովը: Պաշտօնէութեան աստիճանաւորութեան մէջ առաջին երեք դասերն են առաքելները, մարգարէները և վարդապետները, թէպէտ շնորհները շատ են: Առաքելների պատիւը բարձր է, որովհետեւ նրանք ընտրուած են, իսկ մարգարէի (նոր կտակարանի մտքով) և վարդապետի տարբերութիւնն այն է, որ մէկը «գամ. ի հզոյն. բրբռէր. » , իսկ միւսը մարդկային աշխատութեամբ առաքելական և մարգարէական գրքերը մեկնում է և մատչելի կերակուր դարձնում «լուսաւոր հանճարով»: Հետաքրքրական է նորա բացատրութիւնը վարդապետի կոչման մասին, որ տիրապետող էր ամբողջ միջին դարում. «վրդքն. ի լրումն ամենեցուն գոլով զոքլցն. եւ զմգէիցն. ոչ պակաս պատուական է», այլ և առաւել. «րպ. կառավար ի կուս. , եւ ի նաւի, որ զգնին ունիցի: եւ զձկնին. քղքինն. եւ ի տեսնն. անձնակն. , րպ. գրէ Պղատոն. Անեկրաւափն մի ներքսամտեցէ» (**): Յորենի, գարու եւայլն բոյսերը անասունների կերակուր են, քանի չեն մաքրուած, աղացուած եւ հաց պատրաստուած, այդպէս եւ առաքելական եւ մարգարէական գրքերը «չեւ եւս ի ձեռն վրպոյ. քննեալ եւ մեկնեալ, անասնաբարոյ մրդկն. է կերակուր, որ ոչ զմիտս գրոց իմանան եւ ոչ զառակաւոր իմաստ նց. » , բայց «ի ձեռն վրպոյ. քննեալ եւ ճմլեալ զիմաստս բնից. , յառաջ բերեն զհանճարս եւ զիմաստուի. » : Վարդապետը պէտք է իւր քարոզածը և գործով ցոյց տայ, «զի այսպի. վրպքս. ըս. բնեւ. անուան իմաստասէր եւ փիլիսոփոս կոչին», Պղատոնի խօսքերով. «վրպ. կուչեմ ոչ զայն, որ բզմ. բանս ի բերան առնու, այլ որ մաքուր վարս ստացեալ ունի» (***) : Յունաց իմաստ

(*) Արիստոտէլի, Պերիարմէնիաս, նոյն հրատ. եր. 461:

(**) Դաւթի փիլիսոփայի՝ Սահմանք, նոյն հրատ. եր. 128:

(***) Անդ, եր. 128: Մեր միջնադարեան զպրոցների մէջ

վարդապետական աստիճան ստացող ընծայացուին եւս պէտք է նախնի վարդապետներից մէկի գրուածքը անգիր անէր և արտասանէր. այսպէս էր Գրիգոր Տաթևացին (Թովմա Մեծփոքի, Փարիզ, 56). աւելի ուշ 1609 թուին, ոմն Ներսէս եպիսկոպոս (Ձեռ. Էջմ. 2193/2178, 49 բ.) «ի Ռիթլ թվին, ես Ներսէս. եպսկպոս. գրոց աշկրտս. ողբմթբ. տն. սերտեցի զայս մեծախրհդ. ասցւածս. ի պտճո. գւղնի. առնելոյ աւուրն»: Նիւթն է «Յոհան Որոտնեցոյ քաջ հետորի եւ արդիւնական բարունապետի արարեալ ի բան մգէին. , որ ասէ. Արդարութի. տն. ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս. պատուիրանք տն. լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ տն. սբ. է և մնայ

(*) Ձեռ. Էջմ. № 161/167:

(**) Ձեռ. Էջմ. № 2193/2178:

(***) Արիստոտէլի՝ Թուղթ առ Աղէքսանդր Թագաւոր, Դաւթ անյաղթ, Վենետիկ, 1833, 604: